ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

---

« 06 » հունիսի 2013 թ.

թիվ 69

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 8 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5226-13
«07» 06 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«07» մայիսի 2013 թվականի

# Որոշում N 16

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Սերոբ Գասպարյանի 2013 թվականի մայիսի 6-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ Սերոբ Գասպարյանին տալ թույլտվություն Գայ համայնքի Սարյան 4 փողոց, թիվ 31 սեփական տանը (ԿԾ 04-033-105-020) կատարելու շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել մեկ տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ ...կոյան

2013 թվական
հունիսի 5-ին
գ. Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

## ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«24» մայիսի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 17

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ ենթակետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի արդյունքները.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի աճուրդով վաճառքի արդյունքներով կազմված արձանագրությունները:
2. Աճուրդում թիվ 1 լոտի համար հաղթող ճանաչված Աղասի Թորոսյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:
3. Աճուրդում թիվ 2 լոտի համար հաղթող ճանաչված Միեր Հարությունյանի հետ կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Մարկոսյան

2013 թվական
հունիսի 5 ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«03» հունիսի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 18

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՐԿԵՆ ՄԻԼԻՏՈՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակիչ՝ Բարկեն Միլիտոնի Վարդանյանի (ծնված 00.00.1933թ.) 2013 թվականի մայիսի 30-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Երվանդյան փողոց, տուն 17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Բարկեն Միլիտոնի Վարդանյանի (ծնված 00.00.1933թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.11 հա օրինական հողամասի և ինքնակամ 150քմ հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և կից շենք -շինությունների նկատմամբ / բնակելի տունը և օժանդակ շինությունը կառուցվել է 1972թ./:

Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված

հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Բաբկեն Միլիտոսի Վարդանյանի ( ծնված 00.00.1933թ. ) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տների շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Վարկոսյան

2013 թվական
հունիսի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«03» հունիսի 2013 թվականի

# Ո ր ո շ ու մ N 19

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԱՂՈՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակչուհի՝ Վարդանուշ Աղոյի Սահակյանի (ծնված 00.00.1938թ.) 2013 թվականի մայիսի 30-ի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Երվանդյան փողոց, տուն 15 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Վարդանուշ Աղոյի Սահակյանի (ծնված 00.00.1938թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.15 հա օրինական հողամասի և ինքնակամ 174 քմ հողամասի և օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և կից շենք -շինությունների նկատմամբ / բնակելի տունը և օժանդակ շինությունը կառուցվել է 1972թ./:

Բնակելի տունը և շենք-շինությունները բավարարում են «Հայաստանի Հանրապետության համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված

հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնական կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Վարդանուշ Աղոյի Սահակյանի (ծնված 00.00.1938թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնական կառուցված բնակելի տների շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մ. Մարկոսյան

2013 թվական
հունիսի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «02» մայիսի 2013թ.-ի

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5

## ԳՐԻԳՈՐ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով.

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում ֆիլոքսերայով վարակված խաղողի այգիներում հսկողություն իրականացնելու և ախտահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով, Գայ համայնքի բնակիչ Գրիգոր Միրզախանյանին 2013 թվականի մայիսի 2-ից ընդունել աշխատանքի՝ նրա հետ կապելով ծառայությունների մատուցման պայմանագիր՝ մեկ տարի ժամկետով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2013 թվական
հունիսի 5-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «02» մայիսի 2013թ.-ի

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 6

## ԲԱՂԴԱՍԱՐ ԵՐԻՑՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով.

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում ֆիլոքսերայով վարակված խաղողի այգիներում հսկողություն իրականացնելու և սխտահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով, Գայ համայնքի բնակիչ Բաղդասար Երիցյանին 2013 թվականի մայիսի 2-ից ընդունել աշխատանքի՝ նրա հետ կապելով ծառայությունների մատուցման պայմանագիր՝ մեկ տարի ժամկետով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Մարկոսյան

2013 թվական
հունիսի 5-ին
գ. Գայ